Ծառայությունների մատուցման պայմանագիր

ք. Երևան «23» 01 2020թ.

Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը, ի դեմս Ծառայության գլխավոր քարտուղարի պաշտոնակատար Գագիկ Միրիջանյանի (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և քաղաքացի Միխաիլ Շահզադյանը (այսուհետ՝ Կատարող, անձնագիր Р 71 3641863, տրված 15.03.2011թ. 67001-ի կողմից) մյուս կողմից (միասին՝ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը հանձն է առնում իրականացնել Հարկադիր կատարումն ապահովող ծառայության՝ «առցանց աճուրդ» համակարգի և հարկադիր էլեկտրոնային աճուրդի՝ harkadir.ajurd.am կայքի ծրագրային ապահովման սպասարկման ծառայություններ:

2. Կողմերի իրավունքներն ու պարտավորությունները

2.1 Կատարողը պարտավոր է՝

2.1.1 աշխատանքները կատարել անձամբ,

2.1.2 աշխատանքները կատարել Պատվիրատուի հետ համաձայնեցված ժամկետներին համապատասխան,

2.1.3 իր միջոցներով վերացնել աշխատանքների կատարման ընթացքում իր մեղքով տեղ գտած թերությունները,

2.1.4 Պատվիրատուին անհապաղ տեղեկացնել աշխատանքների կատարումը շարունակելու կամ դրանց աննպատակահարմարության մասին:

2.2 Պատվիրատուն պարտավոր է

2.2.1 կատարողին անհրաժեշտ պայմաններ ստեղծել աշխատանքի կատարման համար,

2.2.2 ընդունել կատարված աշխատանքները և վճարել դրանց դիմաց,

2.2.3 վճարել Կատարողի կատարած ծախսերը, եթե աշխատանքների կատարման ընթացքում ի հայտ է գալիս աշխատանքները շարունակելու անհնարինություն կամ աննպատակահարմարություն՝ Կատարողի մեղքից անկախ հանգամանքների հետևանքով:

2.3 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.3. Օգտագործել աշխատանքների իրավական պահպանության ենթակա արդյունքները

3. Վճարման կարգը և ժամկետները

3.1 Պատվիրատուն Կատարողին վճարումները կատարում է կատարողական ակտը երկկողմանի ստորագրելուց հետո՝ ծառայությունների մատուցման 1 /մեկ/ ամսվա դիմաց՝ 105000 (մեկ հարյուր հինգ հազար) << դրամի չափով (առանց հարկային պարտավորությունների և օրենքով սահմանված պարտադիր վճարների):

3.1.1 Սույն պայմանագրի 3.1-րդ կետում նախատեսված վճարվող գումարի մեջ ներառվում են նաև կատարողի կողմից բոլոր ծախսերը:

3.2 Հարկային պարտավորությունների և օրենքով սահմանված պարտադիր վճարների հետ կապված հարցերի լուծման պարտականությունը դրվում է Պատվիրատուի վրա, եթե վճարման պահին կողմերն այլ համաձայնության չգան:

4. Պայմանագրի գործողության ժամկետը

4.1 Պայմանագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից կնքման պահից և գործում է մինչև 24.01.2021թ.

4.2 Պայմանագրի պայմանների փոփոխումը, լրացումը կամ դրա գործողության դադարեցումը իրականացվում է կողմերի գրավոր համաձայնությամբ:

5. Այլ պայմաններ

5.1 Կողմերի միջև Պայմանագրի պայմանների կատարման ընթացքում ծագած վեճերը առաջնահերթության կարգով լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ համաձայնության չգալու դեպքում՝ դատական կարգով:

5.2 Բոլոր այն պայմանների դեպքում, որոնք նշված չեն Պայմանագրում, Կողմերը ղեկավարվում են ՀՀ քաղաքացիական օրենսդրության համապատասխան դրույթներով:

5.3 Եթե Պայմանագրի կետերից որևէ մեկը ինչ-որ պատճառով ճանաչվում է ուժը կորցրած կամ անլուծելի, դա չի ազդում մյուս կետերի վրա, և դրանք չեն կորցնում իրենց իրավաբանական ուժը:

6. Կողմերի վավերապայմանները և ստորագրությունները

Պատվիրատու	Կատարող
Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն ք. Երևան, Հալաբյան 41ա թիվ մեկ գանձապետական բաժանմունք Հ/Հ 900011288025 ՀՎՀՀ 01223338 Գլխավոր քարտուղարի պաշտոնակատար Գ. Միրիջանյան	Միախաիլ Շահզադյան Հասցե՝ ք. Երևան, Հլաբյան փող. 17 շենք, բն. 33 Անձնագիր՝ 71 3641863 Մ. Շահզադյան